



ԳԱԼՈՒԲՍ ԿԻԼԴԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏՆԵՐ

2025-Ի ՉԵԿՈՅՑ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1956 թուականին սկսեալ աշխարհասփիւռ հայ եւ հայագիտական ոլորտի ուսանողներու համալսարանական կրթաթոշակներ տրամադրելը եղած է Հայկական Համայնքներու Բաժանմունքի հիմնական գործունեութիւններէն մէկը:

2025-ի արդիւնքները կը վերաբերին հետեւեալ հինգ կրթանպաստի ծրագիրներուն՝

1. Հայագիտութեան կրթանպաստներ
2. Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ
3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար
4. Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար
5. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ

ՆԱԽԱՀԱՇԻԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ

1. Հայագիտութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը բաց է Հայագիտութեան մէջ մասնագիտացող ուսանողներու եւ հետազոտողներու, որոնք Master's, PhD, կամ Post Doc-ի կը հետեւին ճանչցուած որեւէ համալսարանի մէջ:

2025-ին, Բաժանմունքը նախապատուութիւն տուաւ ժամանակակից հիմնահարցերու վերաբերեալ հետազոտութիւններու: Բաժանմունքը ստացաւ 57 դիմում եւ յատկացուց 16 կրթանպաստ: Կրթանպաստները տարեկան 7,000-էն 25,000-ի միջեւ էին (յատկացուած առաւելագոյնը երեք տարուան համար):

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ Հայագիտութեան յատկացուած կրթաթոշակներու 2025-ի ընդհանուր պատկերը՝



Հայագիտութեան կրթանպաստներ	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Նոր կրթանպաստներ	204,240	13
Նորոգուած կրթանպաստներ	58, 250	4
ԸՆԴԱՄԵՆԸ	262,490	17

2. Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ

Կրթանպաստի այս ծրագիրը հայագիտութեան ոլորտին մէջ աշխատող, ակադեմականներու, հետազոտողներու եւ ուսանողներու (Հայաստանէն դուրս) առիթը կ'ընծայէ մասնակցելու գիտաժողովներու, սեմինարներու, հետազոտական ճամբորդութիւններ կատարելու եւ ակելին:

2025-ին, Բաժանմունքը ստացաւ 153 դիմում եւ 84 նպաստ յատկացուց. վեցը չեղարկուեցան անկանխատեսելի պատճառներով, ընդհանուրը մնաց` 78 (19 տարբեր երկիրներէ): Տասը արեւմտահայերէնի ամառնային խտացեալ դասընթացքներուն հետեւելու համար էին, իսկ վեցը` Լիզպոնի համալսարանի հայերէնի դասընթացքներուն համար (ILNOVA):

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2025-ին յատկացուած «Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ»-ու ընդհանուր պատկերը`

Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Հայագիտութեան կարճաժամկետ դրամաշնորհներ	163,707	62
Հայերէն լեզուի դասընթացքներ	18,878	16
ԸՆԴԱՄԵՆԸ	182,585	78

3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար

Կրթանպաստի այս ծրագիրը Հայաստանի մէջ ապրող ուսանողներու, երիտասարդ ակադեմականներու, եւ հետազոտողներու առիթը կ'ընծայէ կարճաժամկետ դասընթացքներու եւ վերապատրաստումի ծրագիրներու հետեւելու, ինչպէս նաեւ միջազգային գիտաժողովներու եւ աշխատանոցներու ընթացքին իրենց աշխատութիւնները ներկայացնելու:

2025-ին, Բաժանմունքը ստացաւ 315 դիմում եւ 100 նպաստ յատկացուց Հայաստանի քաղաքացիներու որ արտերկրի մէջ գիտաժողովներու մասնակցին: Եօթը նպաստ չեղարկուեցան: Յատկացուած գումարները 550-էն 1,200 Եւրոյի միջեւ էին, իսկ ընդհանուր գումարը կազմեց` 93,537 Եւրո: Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2025-ին յատկացուած «Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար»-ի ընդհանուր պատկերը`



Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	Ցատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ	93,537	93

4. Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար

2025-ին, Բաժանմունքը ստացաւ 190 դիմում եւ 34 կրթանպաստ յատկացուց: Նախորդող տարիներուն յատկացուած 51 կրթաթոշակ նորոգուեցաւ 2025-ին:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2025-ին յատկացուած «Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար» ծրագիրին ընդհանուր պատկերը՝

Բարձրագոյն կրթութեան նպաստ՝ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար	Ցատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Բարձրագոյն կրթութեան նպաստ - նոր կրթանպաստներ	124,000	34
Բարձրագոյն կրթութեան նպաստ - նորոգուած կրթանպաստներ	183,672	51
ԸՆԴԱՄԵՆԸ	307,672	85

5. Փորթուկալի մէջ համալսարանականներու կրթանպաստ

2025-ին, Բաժանմունքը ինը դիմում ստացաւ. եօթը նպաստ ստացան. նախորդ տարիներէն մէկ նպաստ նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2025-ին յատկացուած «Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ»-ի ընդհանուր պատկերը՝

Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	Ցատկացում (ԵԼՐՕ)	Քանակ	Է.	Ա.
Բարձրագոյն կրթութեան նպաստ - նոր կրթանպաստներ	34,900	7	7	0
Բարձրագոյն կրթութեան նպաստ - նորոգուած կրթանպաստներ	3,500	1	0	1
ԸՆԴԱՄԵՆԸ	38,400	8	7	1



ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՏՈՒԵԱԼՆԵՐ

2025-ին Բաժանմունքը 724 դիմում ստացավ. դիմումներ ներկայացուեցան 30 երկիրներէ, անոնց 66%-ը Հայաստանէն էր, 15%-ը Լիբանանէն: Դիմողներուն 31%-ը նպաստ ստացաւ:

2025-ին, Բաժանմունքը 281 կրթանպաստ յատկացուց ընդհանուր 1,015,763 Եւրօ գումարի:

2025-ի կրթանպաստի ծրագիր	Յատկացում (Եւրօ)	Քանակ	Է.	Ա.
1. Հայագիտութեան կրթանպաստներ	262,490	17	13	4
2. Հայագիտութեան համար կարճաժամկետ դրամաշնորհներ	182,585	78	54	24
3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	93,537	93	67	26
4. Բարձրագոյն կրթութեան նպաստ	307,672	85	51	34
5. Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	38,400	8	7	1
2025-ի ՆՈՐ ՅԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԴԱՄԵՆԸ	884,684	281	192	89
Նախորդ տարիներէ նորոգուած կրթանպաստներ	131,079	/	/	/
2025-ի ԸՆԴԱՄԵՆԸ	1,015,763	281	192	89